EUMM

ԴԻՏՈՐԴ

Վրաստանում Եվրամիության մոնիտորինգի Առաքելության տեղեկագիր • Թողարկում #8 • օգոստոս, 2019

Մարդու անվտանգության հարցերով զբաղվող Եվրամիության դիտորդական առաքելության աշխատանքային խումբ. կապի հաստատում հակամարտություններից տուժած համայնքների հետ:

Ամփոփում

Մարդու անվտանգության և մարդու իրավունքների ժողովրդայնացումը շատ կարևոր է Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելության (EUMM) աշխատանքի համար և՝ Թբիլիսիի Եվրամիության դիտորդական առաքելության գլխավոր գրասենյակում և տարածաշրջանային գրասենյակներում՝ Մցխեթայում, Գորիում և Զուգդիդիում, այն աշխատակիցների ուշադրության կենտրոնում է, որոնք դիտարկում են նշված հարցերը և պատրաստում են հաշվետվություններ:

.Տարածաշրջանային գրասենյակներն ունեն մարդու անվտանգության հարցերով աշխատող հատուկ խմբեր, որոնք սովորականի պես կազմված են 5-ից մինչև 7 դիտորդից, որոնք և իրենց հատուկ գործողությունների ոլորտում հետևում են կոնֆլիկտից տուժած բնակչության կենցաղային պայմաններին: - Եվրամիության դիտորդական առաքելության գլխավոր գրասենյակում փորձագետները կատարում են նշված աշխատանքների համակարգում և ապահովում են համապատասխան վերլուծությունն ու խորհրդատվությունը:

Այն բանից հետո, երբ առաքելությունն առաջին անգամ ուղարկվել է Վրաստան, առաջնահերթություն է տրվել ստիպողաբար տեղահանված անձանց և հակամարտություններից տուժած տեղական բնակիչների առօրյա կարիքների և մարտահրավերների բացահայտմանը:

«Նորմալացում»,ինչը ենթադրում է հակամարտությունից տուժածների համար այնպիսի կենցաղային պայմանների՝ վերականգնում, ինչպիսին ունեցել են մինչ պատերազմը՝ Եվրամիության անդամ երկրների կողմից սահմանված առաքելության մանդատի չորս սյուներից մեկն է և 2008 թվականի հոկտեմբերի մեկից,, երբ առաջին դիտորդը եկավ Վրաստան, մնում է նրա աշխատանքի անբաժան մասը:

Չնայած, այսօր նորմալ ապրելակերպի վերականգնման ճանապարհին գոյություն ունեցող արգելքները տարբերվում են նրանից, ինչ կար 2008 թվականին պատերազմի ավարտվելուց հետո և որոշ տարածաշրջաններում մարտահրավերները նույնիսկ ավելացան:

Առաքելությունը գրանցում է նշված մարտահրավերները և կիրառում է իր ձեռքի տակ եղած մեխանիզմները հիմախնդիրների կարգավորման և թեթևացման համար, այդ թվում անհրաժեշտության դեպքում այլ միջազգային կազմակերպությունների և պոտենցիալ դոնորների հետ տեղեկատվության փոխանակման ճանապարհով:

. «Դիտորդի» այս համարը ներկայացնում է մարդու անվտանգության ոլորտում Եվրամիության դիտորդական առաքելության կատարած աշխատանքի ամփոփում:

Ի՞նչ է մարդու անվտանգությունը

Ավանդաբար, «մարդու անվտանգությունը» քննարկվում էր որպես համայնքների ֆիզիկական պաշտպանություն: Մի որոշ ժամանակ առաջ մեկնաբանումն ընդլայնվեց, ինչը ներառում է մարդու իրավունքներին կողմնորոշված մոտեցում:

Այսօր ուշադրությունը կենտրոնացված է անհատի վրա և վերջնական նպատակը ոչ միայն ֆիզիկական պաշտպանությունն է, այլև պաշտպանություն այնպիսի ապառնալիքներից, ինչպիսիք են աղքատությունը, հիվանդությունները և սովը: Մարդու անվտանգությունը առաքելության տեսանկյունից եթե թվարկենք միայն որոշ մասը, ենթադրում է տնտեսական անվտանգությունը, սննդի անվտանգությունը, առողջության անվտանգությունը, էկոլոգիական անվտանգությունը և հասարակության անվտանգությունը:

Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելությունը ինչպե՞ս է աշխատում մարդու անվտանգության հարցերի շուրջ:

Ինչպես արդեն նշել ենք, առաքելության մանդատի գլխավոր բաղադրիչն է «նորմալացումը»: Նորմալացումը ներառում է մարդու անվտանգությունն ամբողջությամբ, որը պարունակում է այնպիսի հարցեր, ինչպիսիք են

տեղաշարժի ազատություն, հողին հասանելիություն և անձնական փաստաթղթեր ունենալու իրավունք:

Դա անելու համար առաքելությունը վերահսկում և վերլուծում է վիճակը և պատրաստում զեկույցներ մարդու անվտանգության վերաբերյալ և առանձնացնում է մարդու անվտանգության խմբեր, որոնք ուշադրություն են դարձնում հազարավոր մարդկանց կենսական պայմաններին, որոնց իրավունքներն ու հանգամանքները դեռ խախտված են:

Առաքելության դիտորդները գնահատում են նրանց տեղաշարժման ազատությունը, սեփականության իրավունքի պաշտպանությունը, բուժօբյեկտների, կրթության, գյուղատնտեսական հողերի և ջրի, արդարադատության, շուկաների և վարչական սահմանից այն կողմ առևտրի առկայությունը: Սրանք հիմական պարտադիր ազատություններ են, ինչը նաև ազդում է տնտեսական հնարավորությունների վրա:

Կենցաղային պայմանների մասին տեղեկատվություն հավաքելու նպատակով Եվրամիության դիտորդական առաքելության դիտորդները ամեն օր հադիպում են տեղական պաշտոնյա անձանց, նաև միջազգային և քաղաքացիական հասարակական կազմակերպություններին և էքսպերտներին: Հանդիպումները հաճախ տեղի են ունենում Ափխազիայի և Հարավային Օսեթիայի վարչական սահմանի մոտակայքում:

Առաքելությունը նաև զրույց է ունենում ստիպողաբար տեղահանված մարդկանց հետ Վրաստանի կառավարության կողմից վերահսկվող տերիտորիաներում, որոնց մեծամասնությունը (45%) բնակվում է կոլեկտիվ կենտրոններում, որոնք բնակութան համար չեն նախատեսված:

Առաքելության հատուկ մարդկանց անվտանգության խմբերի համար նախատեսված անձնակազմը սովորաբար ունենում է մարդու իրավունքների և անվտանգության պաշտպանության ոլորտում մեծ փորձառություն և մասնագիտական փորձ: Առաքելության գլխավոր գրասենյակը Թբիլիսիում համակարգում է տարածաշրջանային յուրաքանչյուր գրասենյակ, որի նպատակն է ապահովել Վրաստանի ողջ տարածքը և նրանց խորհուրդներ է տալիս առաքելության միջոցով մարդու իրավունքների և գենդերային հիմախնդիրների վերաբերյալ: Մարդկային անվտանգության մարտահրավերների անընդհատ փոփոխվող բնույթի պատճառով Առաքելության գլխավոր շտաբը պարբերաբար թարմացնում է կենտրոնացած տարածքները Բրյուսելում ԵՄ ինստիտուտների հետ համակարգելով՝ ապահովելու, որ տեղական և ԵՄ մակարդակներում որոշում կայացնողների համար հավաքվեն համապատասխան տեղեկատվություն:

Մարդու անվտանգության խմբերը պարբերաբար հանդիպում են այն ինստիտուտների և գործակալությունների հետ, որոնք պատասխանատու են մարդու անվտանգության համար համապատասխան քաղաքականության մշակմանը և իրականացմանը: 2009 թվականից ի վեր առաքելությունը կազմակերպում է կանոնավոր «Տեղեկատվության փոխանակման հանդիպումներ» (ISM) վրացական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար ինչպես Զուգդիդիում, այնպես էլ Թբիլիսիում: Այս հանդիպումները տեղական համայնքին հարթակ է առաջարկում ստեղծված իրավիճակի վերաբերյալ տեսակետներ և տեղեկատվություն փոխանակել և առաքելությանը հնարավորություն ընձեռել տեղեկացնել քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին հակամարտություններին վերաբերող հարցերի մասին: Տեղեկատվության փոխանակման հանդիպումները կապում են Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելությունը հասարակական կազմակերպությունների հետ և մեծապես օգնում են առաքելությանը խորացնել իր գիտելիքները տեղում մարդու անվտանգության հիմախնդիրների վերաբերյալ և քաղաքացիական հասարակության նախաձեռնությունների հետագա քննարկման համար:

Մարդու անվտանգության վերաբերյալ առաքելության աշխատանքի հիմական հիմասյուներն են հենց իրենք՝ դիտորդներն են: Առաքելության դիտորդները Եվրամիության 26 անդամ երկրներից են, նրանք ունեն կյանքի մեծ փորձ և հատուկ գիտելիքներ և հետաքրքրություններ գենդերի, հավասարության, հասարակական կարգի և մարդու իրավունքների ոլորտում:

Այս բազմակողմանի փորձը օգտակար է մարդու անվտանգության խմբերի աշխատանքի և մասնագիտացման մեջ:

Մեկ օր Գորիում մարդու անվտանգության հարցերով զբաղվող խմբի դիտորդի կյանքից

Խերարդ դե Բուրի, Նիդերլանդներ, Մարդու անվտանգության հարցերով աշխատող խմբի դիտորդ՝ Գորիի տարածաշրջանային գրասենյակ

Ինչո՞ւ է կարևոր Ձեր աշխատանքը:

Մենք կարևոր դեր ենք խաղում բաց հակամարտությունը կանխելու և հակամարտության երկու կողմերում մարդկանց միմյանց հետ շփումս ապահովելու հարցերում: Մեր մոնիտորինգային աշխատանքների միջոցով մենք ձգտում ենք նորմալ կյանքը վերադարձնել առավել տուժած մարդկանց, հատկապես նրանց, համար, ովքեր ապրում են վարչական սահմանի մոտակա գյուղերում: Ես մեծ կարևորություն եմ տալիս այս գործին և հպարտ եմ, որ դրանում մասնակցում եմ:

Մարդու անվտանգության հետ կապված ո՞ր խնդիրներն եք այսօր կատարում, և ինչպե՞ս են դրանք տեղավորվելու Մարդու անվտանգության աշխատանքային խմբի ընդհանուր պլանում:

Այսօր մենք հարցազրույց ունենք Գորիի սոցիալական ծառայության գործակալության հետ՝ քննարկելու և ստանալու Գործակալության աշխատանքի և ցանկացած հրատապ հարցերի վերաբերյալ տարբեր կամ նոր համապատասխան տեղեկատվություն: Այնուհետև մենք կուղևորվենք Փլավի և Քվեշի գյուղերը՝ տեղի բնակիչներից թարմացված տեղեկատվություն ստանալու խմելու ջրի, ոռոգման համակարգերի և գյուղատնտեսական նշանակության հողերի հասանելիության վերաբերյալ, ինչպես նաև անվտանգության հետ կապված ցանկացած այլ խնդրի մասին: Սա կարևոր է, քանի որ, ինչպես առաքելությունը, մենք ևս պետք է տեսնենք և լսենք, թե ինչպես են չկարգավորված հակամարտությունները ազդում մարդու հիմական կարիքների առկայության վրա՝ Եվրամիությանում որոշումներ կայացնողներին տեղեկացնելու և վարչական սահմանագծի երկու կողմերում որոշում կայացնողների հետ միասին փնտրելու խնդրի հնարավոր լուծումները:

Ձեզ ո՞վ կօգնի այսօր:

Ինձ օգնում են իմ գործընկերը մարդու անվտանգության հարցերով զբաղվող խմբից Կարին Էկլունդին Շվեդիայից և թարգմանիչ Նինոն Վրաստանից:

Որքա՞ն ժամանակ կպահանջվի պարեկության համար:

Պարեկությունը պլանավորում է հինգից մինչև վեցը, բայց փորձը ինձ սովորեցրել է, որ հենց սկսենք խոսել մարդկանց հետ, զրույցի հոսքը և պարեկությունը, հավանաբար, կտևի ավելի երկար:

Մարդու իրավունքները՝ առաքելության և Եվրամիության գործողությունների հիմք

Մարդու իրավունքների և հիմարար ազատությունների նկատմամբ հարգանքը Եվրամիության հիմական արժեքն է և նրա գործողությունները անբաժան են, ներառյալ միջազգային գործընկերների հետ աշխատելու համար: Եվրամիության բոլոր առաքելությունները պարտավոր են իրականացնել իրենց գործունեությունը մարդու իրավունքների հիմական սկզբունքներին համապատասխան:Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելությունը դրան հասնում է մարդու իրավունքների հարցերով տեղեկատվություն հավաքելով, ստուգելով և վերլուծելով, և Եվրամիության անդամ պետությունները պարբերաբար տեղեկացվում են մարդու իրավունքի խախտումների մասին: Առաքելությունն օգտագործում է լավ կայացած կապի մեխանիզմները. միջադեպերի կանխարգելման և դրանց արձագանքման մեխանիզմի հանդիպումները, ինչպես նաև առաքելություն իրականացնող թեժ գիծը՝ մարտահրավերների կողմերի հետ մարդու իրավունքների և միջազգային մարդասիրական իրավունքի մարտահրավերների մասին քննարկումների համար:

«Հաճելի է տեսնել, թե որքան են նպատակաուղղված աջակցում տարածաշրջանային գրասենյակի իմ գործընկերները Մարդու իրավունքների պաշտպանության ժողովրդայնացմանը: Նրանք կազմակերպում են հանդիպումներ շահագրգիռկողմերի,ոչ Կառավարական կազմակերպությունների և պետական պաշտոնյաների հետ՝ տեղեկատվությունների փոխանակման նպատակով: Նրանք հավաքում են տեղեկություններ անօգնական խմբերի և մարդու իրավունքների հնարավոր խախտումների մասին, որի վերստուգումը երկար ժամանակ է պահանջում: Օրինակ, տեղաշարժման կամ մայրենի լեզվով կրթություն ստանալու իրավունքի մասին, բայց նրանք չեն նահանջում, մինչև ռեալ պատասխան չեն ստանում»: Ռադկա Ռուբիլինա, Եվրամիության դիտորդական առաքելության Մարդու իրավունքների հարցերով խորհրդական:

Առաքելության բոլոր երեք խմբերում բոլոր դիտորդները (մարդու անվտանգության, համապատասխանության և վարչական սահմանագծի հարցերով) պատասխանատու են մարդու իրավունքների հիմախնդիրների նույնականացմանը և զեկույցին: Սրա հետ Վրաստանում դիտորդական առաքելության մարդու իրավունքների հարցերով աշխատող խմբերը գլխավոր դերն են կատարում խորացված մոնիտորինգի և նման հարցերի հաշվետվության մեջ: Թբիլիսիում գործող Մարդու իրավունքների հարցերով խորհրդականը վերլուծում է տեղում ստացված տեղեկատվությունը՝ հաշվի առնելով մարդու իրավունքների միջազգային իրավունքը, միջազգային մարդասիրական իրավունքը և միջազգային չափորոշիչները: Բացի 2008 թվականի պատերազմի արդյունքներից, միջազգային պայմանագրի, սովորական միջազգային Օրենքների, և միջազգային Օրենքի ընդհանուր այլ սկզբունքների հետ համապատասխանության գնահատման հարցերից, Մարդու իրավունքերի խորհրդականը նաև ուսումնասիրում է սեփականության իրավունքներն ու դրանց պաշտպանությունը: Սա ներառում է հասանելիություն Վրաստանի մշակույթի և կրոնական ժառանգության հուշարձանների կառավարմանը, Վրաստանի էթնիկ փոքրամասնությունների հետ հարաբերությունները, հակամարտություն հետ առնչվող միջազգային քրեական գործերը, ատելության խոսքերը կամ ատելության հանցագործությունները, միգրացիայի խնդիրներին վերաբերող փաստաթղթերը, հատման ռեժիմի կամ ներքին տեղահանված անձանց ձերբակալման դեպքերը և կալանքի պայմանները:

Վրաստանում մարդու իրավունքների իրավիճակի վերաբերյալ տեղեկատվության անխափան հոսք ապահովելու համար Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելությունը ստեղծել է մասնագիտացված անձնակազմի ցանց, որը միմյանց հետ կապելու է տարածաշրջանային գրասենյակները և առաքելության գլխավոր շտաբը: Այս ցանցը պարբերաբար կազմակերպում է հանդիպումներ երկրում մարդու իրավունքների հիմախնդիրների վերաբերյալ, քննարկում վերջին բացահայտումները, զարգացումները և միտումները: Այս հանդիպումները և տեղեկատվության փոխանակումը պարբերաբար բարելավում է ինչպես առաքելության մոնիտորինգը, այնպես էլ տեղում մարդու իրավունքների ոլորտում երևույթների վերլուծումը, հնարավորություն է տալիս նրանց ավելի լավ հաղորդել տեղեկատվությունը Եվրամիության անդամ պետություններին և միջազգային գործընկերներին:

Մեկ օր Զուգդիդիում մարդու անվտանգության հարցերով զբաղվող խմբի դիտորդի կյանքից...

Նադեժդա Դրումևա, Բուլղարիա, Մարդու անվտանգության հարցերով աշխատող խմբի դիտորդ՝ Զուգդիդիի տարածաշրջանի գրասենյակ

Ինչո՞ւ է Ձեր աշխատանքը կարևոր:

Ես իմ աշխատանքը համարում եմ կարևոր, քանի որ այն մարդկանցից շատերը, ում հետ ես հանդիպում եմ իմ աշխատանքի շրջանակներում, հատկապես ստիպողաբար տեղահանվածների, շատ ծանր պայմաններ ունեն: Խոսելով մարդկանց հետ, ես կարող եմ ավելի լավ հասկանալ այդ մարտահրավերների մասին, դրանց թվում այնպիսի հարցերի, ինչպիսիք են՝ Աբխազիայի հետ վարչական սահմանի վրա շարժվելու իրավունքը, մարդու իրավունքների խախտման դեպքեր և սոցիալական ապահովության և սոցիալական աջակցության մատչելիությունը:

Այս հարցերի մոնիտորինգը հատկապես կարևոր է, քանի որ առաքելությունն օգնում է ուսումնասիրել, թե որքանով են մարդիկ տուժված և երբեմն բացահայտել հնարավոր լուծումները, որոնք կարող են քննարկվել թեժ գծի կամ դեպքերի կանխարգելման և արձագանքման մեխանիզմի միջոցով: Ինձ համար այս գործի առավել հպարտ հատվածը տեղացիների հետ հարաբերությունն է, որովհետև վրացիները բուլղարացիների նման են: Նրանք բարի, անկեղծ, ջերմ, հյուրընկալ մարդիկ են: Այնպիսի զգացում ունեմ, կարծես տանն եմ:

Մարդու անվտանգության ո՞ր խնդիրներն եք այսօր իրականացնելու, և ինչպե՞ս են դրանք տեղավորվելու Մարդու անվտանգության աշխատանքային խմբի ընդհանուր պլանում:

Այսօր մենք ունենք հատուկ առաջադրանք՝ հավաքել տեղեկատվություն բերքատվության հետ կապված, որը վերջին մի քանի տարիների ընթացքում շատերի համար դարձել է խնդրահարույց՝ ներգաղթային ֆասատուների պատճառով: Մենք կխոսենք նաև տեղական հասարակական կազմակերպությունների հետ, որոնք աշխատում են գենդերային բռնության վերաբերյալ բողոքների և պաշտպանության մեխանիզմների հարցերով, որոնք առկա են իրենց տեղական համայնքներում, ինչպես նաև կանանց հասանելիությունը այդ մեխանիզմներին: Տարեկան բերքի վրա ֆասատուների ներկայիս ազդեցությունը վերահսկելը կարևոր խնդիր է, քանի որ այն տնտեսական անվտանգության միջոց է այն մարդկանց համար, որոնց ընտանիքի եկամուտները գրեթե ամբողջությամբ կախված են գյուղատնտեսությունից: Գենդերային բռնությունը լայնորեն ճանաչվում է որպես հակամարտության բարոմետր՝ ընտանեկան բռնության աճը պատմականորեն լայն հասարակության մեջ հակամարտության նախադրյալ էր, բացի այդ, կանանց, տղամարդկանց, տղաների և աղջիկների անձնական անվտանգությունը մարդու հիմական իրավունքն է, և Մարդու անվտանգության աշխատանքային խմբի շրջանակներում մեր աշխատանքը հենց դրա գնահատումն է:

Ո՞վ կօգնի ձեզ այսօր և ո՞ր ոլորտներում եք կատարելու ձեր հանձնարարությունը:

Իմ միջազգային գործընկերները կօգնեն ինձ զրուցել մարդկանց հետ, որպեսզի հավաքենք, ստուգենք և վերլուծենք տեղեկատվությունը մարդու իրավունքների և գենդերային հարցերի վերաբերյալ: Մարդկանց անվտանգության հարցերով աշխատող թիմի իմ գործընկերներն այսօր Լյուքսեմբուրգից Դավիթ Մոուրան է և թարգմանիչ Մանանան՝ Վրաստանից:

Որքա՞ն ժամանակ կպահանջվի պարեկության համար:

Իմ պարեկությունը սկսվում է առավոտյան ժամը 9-ից և ավարտվում է երեկոյան ժամը 5-ին: Երբեմն լինում է կոնկրետ առաջադրանք և մենք պետք է զրուցենք մեծ քանակով մարդկանց հետ, որպեսզի ստանանք լայն պատկերացում, պարեկությունը, հավանաբար, ավելի երկար ժամանակ տևի:

Գենդերային հավասարության զարգացումը Եվրամիության դիտորդական առաքելության ընդհանուր պատասխանատվությունն է

Վրաստանում ետհակամարտության իրավիճակի մոնիտորինգի ընթացքում Եվրամիության դիտորդական առաքելությունն ապահովում է, որ կանայք և տղամարդիկ հավասարապես խորհրդատվություն ստանան, որպեսզի ավելի լավ հասկանան իրենց բազմազան դերերի և գենդերային անհավասարությունների ազդեցությունը վրացական հասարակության մեջ մարդու անվտանգության վրա, ներառյալ արդարադատության,, անձնական, տնտեսական, առողջապահության, սննդի և շրջակա միջավայրի անվտանգության վրա:

Վրաստանում Եվրամիությանդիտորդականառաքելության աշխատանքի հիմքը Գենդերային հավասարությունն է:

Գենդերային դերերի և հարաբերությունների տարբերությունների հայտնաբերումը օգնում է առաքելությանը `ավելի լավ հասկանալու, թե ինչպես է հակամարտությունը ազդել յուրաքանչյուրի վրա: Դրան հասնելու համար շատ կարևոր է, որ առաքելությունը խոսի ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց, և այնուհետև տեսակետը պետք է վերլուծվի և զեկուցվի: Սա Եվրամիության դիտորդական առաքելության բոլոր թիմերի ուշադրության կենտրոնում է, ներառյալ Մարդու անվտանգության հարցերով աշխատանքային խումբը:

«Գենդերային հարցերի ուղղորդումը և գենդերային հավասարության հաստատումը Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելության ընդհանուր պատասխանատվությունն է: Գենդերային հարցերը համակարգողների ցանցը անգնահատելի ռեսուրս է մեր պարեկապահակային խմբերի ամենօրյա դիտորդական միջոցառումների մեջ գենդերային ինտեգրացման համար: «Մեր համակարգում գենդերային հեռանկարը հաջողությամբ և իմաստալից ինտեգրելու համար անհրաժեշտ են համակարգային ջանքեր. «Յուրաքանչյուր աշխատող պետք է կարևոր դեր խաղա» - Սինի Ռամո, գենդերային հարցերով առաքելության խորհրդատու»:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1325 բանաձև՝ կանանց, խաղաղության և անվտանգության մասին ոչ միայն ճանաչում է այն տարբերությունները, թե ինչպես են տուժում կանայք, տղամարդիկ, տղաներ և աղջիկներ հակամարտությունից, այլև ասում է, որ մշտական խաղաղությունը կարող է հասնել միայն այն դեպքում, եթե կանայք մասնակցեն դրան հասնելու համար իրականացվող գործընթացներին: Եվրամիությունը լիովին հավանություն է տալիս այդ բանաձևին և ընդունել է իր սեփական ուղեցույցը, ներառյալ Եվրամիության անվտանգության և պաշտպանական քաղաքականության առաքելությունների պահանջը՝ հաշվի առնելով գենդերային խնդիրները իրենց աշխատանքի բոլոր ոլորտներում: Սա նշանակում է, վերլուծում այն բանի, թե ինչ ազդեցություն ունի սեռը մարդկանց կարիքների, մարտահրավերների և հնարավորությունների վրա, գենդերային տարանջատված տվյալների հավաքում և վերլուծություն, կանանց և տղամարդկանց համար համապատասխան հարցերի նախապատրաստում, ինչպես նաև ապահովում, որ այդ հարցերը ուղղող Եվրամիության դիտորդական առաքելության դիտորդական խումբը, որն այս հարցերն է առաջադրում, կազմված լինի կանանցից, ինչպես նաև տղամարդկանցից:

Գրասենյակների և մարզային գրասենյակների գենդերային համակարգողների ցանցը նպաստում է առաքելության մասշտաբով գենդերային հարցերի ուղղորդմանը:

Ոռոգման և վարչական սահմանագծի նկատմամբ վստահության վերականգնում՝ գյուղատնտեսական նշանակության հողերի հարցերով

Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելության Գորիի տարածաշրջանային գրասենյակի մարդկային ռեսուրսների պատասխանատու Անվտանգության աշխատանքային խումբը բաղկացած է տարբեր ազգությունների և փորձառուների 5 դիտորդից, նրանց փորձն ընդգրկում է հետևյալ ոլորտները. հանրային անվտանգություն, Մարդու միջազգային իրավունքներ, ապաստանի պաշտպանություն, լավ կառավարում և տեխնիկական աջակցություն կայուն գոյության համար: Խումբն ընդգրկում է թեմաների լայն տեսականի, ներառյալ տեղի առջև ծառացած մարտահրավերները Հարավային Օսեթիայի վարչական սահմանագծի երկայնքով: Սա ներառում է հասանելիություն հողի և ոռոգման ջրին:

Վարչական սահմանի երկայնքով բնակվող բնակչության 90% -ը մեծապես կախված է գյուղատնտեսությունից: Ըստ այդմ, խումբը կենտրոնանում է հենց այդ խնդիրների վրա: 2008-ի հակամարտությունը լուրջ բացասական հետևանքներ ունեցավ վարչական սահմանի երկու կողմերում բնակվող անձանց համար: Գյուղացիներից շատերն իրավունք չունեն մուտք գործել այն հողատարածքը, որն ավանդաբար օգտագործել են գյուղատնտեսության համար, և որից կախված է նրանց եկամուտը:

Խումբն իր եզրակացություններն ու գնահատականները կիսում է մասնագիտացված գործակալությունների և հասարակական կազմակերպությունների հետ, ներառյալ ծայրահեղ աղքատության դեպքերի վերաբերյալ: Արդյունքում վարչական սահմանագծի երկու կողմերում օգնություն են ցուցաբերել մի քանի ընտանիքների:

Ոռոգումը խմբի համար մեկ այլ կարևոր խնդիր է: Ավանդական ոռոգման ջուրը ոռոգման համակարգից հոսում էր դեպի Հարավային Օսեթիայից վրացական կառավարության կողմից վերահսկող տարածք: 2008 թվականից ի վեր շատ լայնածավալ համակարգը դադարեց գործել, որի հետևանքով գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ տարածքներ մնացին առանց ոռոգման ջրի:

Հազարավոր պտղատու ծառեր ոչնչացան, և ֆերմերները բանջարեղենային մշակաբույսերը, որոնք մեծ քանակությամբ ջուր են պահանջում աճի համար, փոխարինեցին մշակաբույսերով, որոնք դրա կարիքը չունեն, բայց որոնք ավելի ցածր արժեք ունեն: Ջրին հասանելիությունը մարդու իրավունքների հիմնախնդիրն է:

Ոռոգման այս համակարգերից մի քանիսը վերականգնվել են թանկարժեք պոմպակայանների օգտագործման միջոցով՝ Վրաստանի կառավարության կողմից վերահսկվող տարածքում: Այնուամենայնիվ, Մարդու անվտանգության հարցերով աշխատանքային խումբը հույս ունի, որ ավելի քիչ թանկ և ավելի կայուն լուծում կարելի է գտնել Միջադեպերի կանխարգելման և արձագանքման մեխանիզմների հանդիպումներում ընթացող քննարկումների արդյունքում:

Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելությունը փորձի փոխանակման նպատակով կազմակերպում է հանդիպումներ տեղական հասարակական կազմակերպությունների հետ

Զուգդիդիի տարածաշրջանային գրասենյակում Մարդու անվտանգության հարցերով աշխատող խումբը բաղկացած է 7 անդամից: Նրանք ունեն քաղաքացիական և ոստիկանության խառը փորձ: «Զուգդիդի» խմբի հիմական խնդիրներից մեկը կանոնավոր կերպով տեղեկատվության փոխանակման հանդիպումների (ISM) կազմակերպումն է, որպես օրենք, յուրաքանչյուր վեց-ութ շաբաթը մեկ անգամ: Այս հանդիպումները հիմվում են Վրաստանում ՄԱԿ-ի դիտորդական առաքելության կողմից սկզբում անցկացվող նմանատիպ հանդիպումների վրա, որը 2009 թվականից աստիճանաբար դադարեց երկրում: Մարդկային անվտանգության հարցերով աշխատող խմբերը մասնակցում են այս կարևոր հանդիպումներին և հաճախ հանդիպում են նաև նախագահներին:

2009 թ-ից, մեր տարածաշրջանային գրասենյակը Զուգդիդիում նախագահություն է արել տեղեկատվության փոխանակման 72 հանդիպմանը, մեր տեղական գործընկերների և միջազգային մասնակից շահագրգիռ կողմերի հետ միասին, ինչպիսիք են Եվրամիության հատուկ ներկայացուցչի գրասենյակ Հարավային Կովկասում և Վրաստանում ճգնաժամի հարցերով և Միավորված ազգերի ստիպողաբար տեղահանված անձանց կազմակերպությունը: Այս հանդիպումները ոչ միայն նպաստում են մեր գործընկերների միջև ավելի լավ փոխըմբռնմանը, այլև մեզ եզակի հնարավորություն են տալիս տեղեկացնել վրաց բնակչությանը առաքելության մանդատի և գործունեության մասին», - ասում է Եվա Պրեսկովան, Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելության Զուգդիդիի տարածաշրջանային գրասենյակի ղեկավարի տեղակալը:

«Մենք անհանգստացած ենք Աբխազիայում և Հարավային Օսեթիայում խաղաղության հաստատման հնարավորությունների պակասությամբ: Այնուամենայնիվ, հակամարտությունը վերափոխելու համար շատ լավ աշխատանքներ են տարվում: Մենք տեսնում ենք, որ Եվրամիության դիտորդական առաքելությունը լրջորեն փորձում է պաշտպանել խաղաղ միջավայրը », - ասում է հասարակական կազմակերպության ներկայացուցիչը Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելության հետ տեղեկատվության փոխանակման հանդիպման ժամանակ:

Յուրաքանչյուր հանդիպմանը սովորաբար լինում է 20 մասնակից, որից մինչև 18-ը ներկայացնում են հասարակական կազմակերպություններ տարբեր տարածաշրջաններից: Այս հանդիպումների նպատակն է տեղեկատվություն փոխանակել Արևմտյան Վրաստանում տեղի ունեցող զարգացումների վերաբերյալ, որոնք կարևոր են քաղաքացիական հասարակության համար: Մասնակից կազմակերպությունները պատկերացումներ կտան իրենց ծրագրերի, համայնքի կյանքի և ամենօրյա մարտահրավերների վերաբերյալ:

«Այս հանդիպումներում տեղի փորձագետները, հասարակության բոլոր ոլորտներից, օգնում են մեզ բաց և թափանցիկ ճանապարհով, որպեսզի ավելի լավ հասկանանք տեղում ընթացող երևույթների զարգացման և ժողովրդի կյանքի վրա նրանց դրական ազդեցության մասին», - Պեկկա Մատիլա, Զուգդիդի տարածաշրջանային գրասենյակի Մարդու անվտանգության հարցերով աշխատող խմբի առաջնորդ:

Զուգդիդիի շուկայի նշանակությունը Գալիում բնակվող ժողովրդի համար

Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելության նպատակներից մեկն է վերահսկել այն առաջընթացը, որին հասել էին վարչական սահմանի երկու կողմերում ապրող մարդկանց համար անվտանգ և նորմալ կյանքի վերականգնման ուղղությամբ: Բազմաթիվ միջոցառումների շարքում, իհարկե, մեկը սննդի և այլ պարտադիր կարիքների նյութերի ազատ մուտքն է:

Զուգդիդիի շուկան գտնվում է Էնգուրու կամուրջից մոտ 10 կմ հեռավորության վրա, որը հանդիսանում է վրացական կառավարության կողմից վերահսկվող տարածքի և Աբխազիայի միջև հիմական անցման կետը: Այն 2000 մարդկանցից, ովքեր վարչական սահմանագիծը հատում են ամեն օր, մեծ մասը գնում է Զուգդիդի շուկա առաջին անհրաժեշտության իրերը գնելու համար, քանի որ համարվում է, որ այդ ապրանքներն այստեղ ավելի էժան են, քան Գալիի շուկայում: Ըստ շուկայի առևտրականների, նրանց հաճախորդների մոտ կեսը գալիս է Աբխազիայից:

2019 թվականին Էնգուրի կամրջի վրա խաչմերուկը կկառավարվի Աբխազիայի դե ֆակտո իշխանությունների կողմից: Երկար ժամանակահատվածում «մարդիկ պետք է սահմանափակումներ ունենան անցումների համար: Արդյունքում զգալի դժվարություններ եղան և վաճառականների և օգտվողների համար: Շուկայավարողները անհանգստացած էին եկամուտների կտրուկ անկման պատճառով: Գալիի բնակիչները տեղեկացրին առաքելությանը, որ առանց Զուգդիդի շուկա մտնելու, նրանք երեք անգամ ավելի պետք է վճարեն նույն ապրանքները գնելու համար, ինչը ամենավատն է: Եվրամիության դիտորդական առաքելության դիտորդները պարբերաբար գնում են շուկա, ծանոթանալու սոցիալ-տնտեսական իրադարձությունների զարգացմանը, և տեղաշարժման ազատության միտումների հետ: Առևտրականների և սպառողների հետ անցկացրած դիսկուսիայի հետևանքով հավաքված տեղեկատվությունը ընդլայնում է Եվրամիության դիտորդական առաքելության վերլուծությունը և կոնֆլիկտի արդյունքների մասին հաշվետվությունը:

«Մարդիկ պետք է այս տարածաշրջանում կամուրջը հատելու և որտեղ ցանկանան, այնտեղ ճանապարհորդելու իրավունք ունենան: Մենք պետք է առանց սահմանափակումների կարողանանք մեր մթերքը տեղափոխել Զուգդիդի և Գալիի միջև»: Տեղական բնակիչ Զուգդիդիից:

Վրաստանն ունի բազմապիսի էթնիկական լանդշտաֆտ

Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելությունը իր մանդատին համապատասխան վերահսկում է բոլոր իրադարձությունների զարգացումը, ներառյալ փոքրամասնությունների խմբերը, որտեղ սոցիալ-տնտեսական ներգրավվածությունը սահմանափակ է, իսկ արտաքին ազդեցության ներուժը մեծ է: Չնայած առաքելությունը հայտնի է, հիմականում վրացիներով բնակեցված վայրերում, Վրաստանի այլ շրջաններում, մարդու անվտանգության հարցերով աշխատող խմբերը ավելի շատ ջանք են գործադրում բացատրելու իրենց խնդիրները, գործունեությունը և ընդհանուր առմամբ Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելության դերը: Ինչպես ադրբեջանական, այնպես էլ հայկական հասարակություններում աղքատությունը հաճախ թույլ չի տալիս մարդկանց ճանապարհորդել իրենց գյուղից այն կողմ, և վրացերենի իմացության պակասը խանգարում է լիարժեք մասնակցությանը վրացական հասարակական և քաղաքական կյանքին: Այս համեմատական մեկուսացման պատճառով ադրբեջանական և հայկական համայնքներից շատերը սահմանափակ տեղեկություններ ունեն 2008 թվականի կոնֆլիկտի վերաբերյալ, կամ այլ պատկերացումներ ունեն դրա պատճառների և հետևանքների վերաբերյալ, ինչը հիմականում տարածված է վրաց հասարակության մեջ:

Այս երկխոսությունը հաճախ տարածվում է երկրի մեսացած մասում տիրող քաղաքական իրավիճակի վրա և ամրապնդվում է, երբ խոսքը վերաբերում է Հարավային Օսեթիայի և Աբխազիայի տարածքներին:

Եվրամիության դիտորդական առաքելությունը ավելացրել է իր գործունեության տեսանելիությունը փոքրամասնությունների տարածքում, հատկապես ադրբեջանական և հայկական համայնքներում:

Երեխաները հատում են վարչական սահմանի գիծը՝ դասերին մասնակցելու համար

Դպրոցը միշտ չէ, որ հեշտ է: Ոմանք դժվարանում են ժամանակին քնել՝ դպրոց հասնելու համար: Քո և քո դպրոցի միջև վարչական սահմանագծի կամ անցակետի առկայությունը այն ավելի է բարդացնում: Զուգդիդիի Մարդու անվտանգության տարածաշրջանային գրասենյակը աշխատանքներ է տանում, որպեսզի երեխաները հնարավորություն ունենան հատել ճանապարհը նվազագույն խանգարումներով:

Մարդու անվտանգության հարցերով աշխատանքային խումբը Զուգդիդիի տարածքային գրասենյակում առանձնահատուկ ուշադրություն է հատկացնում կրթության իրավունքին և դպրոցի աշակերտների համար վարչական սահմանագծի հատման կարիքի վրա, որպեսզի նրանք կրթություն ստանան մայրենի լեզվով:

2016 թվականից աշակերտների թիվը նվազում է (մանկապարտեզից մինչև 12-րդ դասարան), ովքեր ամեն օր հատում են վարչական սահմանագիծը դպրոց հաճախելու համար: 2009 - 2010 թվականներին ամեն օր 128 երեխա էր անցնում: 2016-2017 թվականների այս ցուցանիշը նվազեց մինչև 39, իսկ 2018-ին՝ այդ ցուցանիշը միայն 21-ն էր: Վարչական սահմանագծի երկայնքով ավելի ու ավելի ցանկապատերի տեղադրումը և 2016, 2017 թվականներին երկու հատման կետերի փակումը օգնեց անցումների քանակի կրճատմանը: Շատ աշակերտներ ստիպված էին փոխել դպրոցը: Մյուսներն ընտանիքների հետ տեղափոխվեցին վրացական կառավարության կողմից վերահսկվող տարածք:

«Վարչական սահմանագծի երկու կողմում ապրող բնակչության համար անվտանգ և նորմալ կյանքի վերականգնումը, այդ թվում՝ բոլոր երեխաների իրավունքը կրթություն ստանալ մայրենի լեզվով առաքելության մանդատի գլխավոր էլեմենտն է Սա է մարդու իրավունքը», -Տինեկե Ռիլաերտս, Զուգդիդիի տարածքային գրասենյակի Մարդու անվտանգության հարցերով աշխատող խմբի առաջնորդի տեղակալ:

Վարչական սահմանագիծն անցնող երեխաները առավոտյան թողնում են իրենց տունը Աբխազիայում և անցնում վարչական սահմանագիծը Սաբերիի վերահսկվող սահմանային անցակետում, որը կազմված է ռուս սահմանապահներից: Այնուհետև նրանք ավտոբուսով ճանապարհորդում են վրացական վերահսկողության տակ գտնվող տերիտորիայով դպրոց գնալու համար: Դասերն ավարտվելուց հետո նրանք ավտոբուսով ուղևորվում են նույն անցակետ՝ տուն վերադառնալու համար: Տարածաշրջանային գրասենյակը վերահսկում է նրանց ճանապարհորդությունը և պարբերաբար այցելում է Սաբերիո՝ նրանց տեղաշարժումը դիտարկելու նպատակով: Դիտորդները նաև զրուցում են դպրոցի տնօրենների հետ դպրոց հաճախելու մասին, պարզելու համար այն լրացուցիչ խոչընդոտները, որոնք կարող են հանդիպել այդ երեխաներին դպրոց հաճախելիս:

Այլ դպրոցի աշակերտներն ու ուսանողներն ավելի քիչ են հատում վարչական սահմանագիծը: Օրինակ, նրանք սովորում են Զուգդիդիում կամ Թբիլիսիում գտնվող դպրոցում, արհեստագործական քոլեջում կամ համալսարանում, բայց ապրում են հանրակացարանում կամ ընտանիքի անդամների հետ՝ Վրաստանի կառավարության կողմից վերահսկվող տարածքում: Նրանք վերադառնում են շաբաթ և կիրակի օրերին կամ արձակուրդների ընթացքում:

Եվրամիության դիտորդական առաքելությունը պարբերաբար նորացված տեղեկություններ է տրամադրում Եվրամիության անդամ պետություններին և ինստիտուտներին՝ կապվածԱբխազիայում և Հարավային Օսեթիայում դպրոցի աշակերտների համար առկա իրավիճակներ հետ: Առաքելությունն օժանդակում է հումանիտար մոտեցման բոլոր հնարավոր դեպքերին և ֆորումներին, ներառյալ Միջադեպերի կանխարգելման և արձագանքման մեխանիզմի շրջանակներում հանդիպումներին ինչպես նաև Եվրամիության դիտորդական առաքելության թեժ գծի միջոցով, և նպաստում է երեխաների՝ տեղաշարժման ազատությանը՝ իրենց լեզվով կրթություն ստանալու նպատակով:

Մեր դիտորդները պարբերաբար հանդիպում են ստիպողաբար տեղահանվածների հետ

Մցխեթայի տարածաշրջանային գրասենյակում Մարդու անվտանգության հարցերով աշխատող խումբը բաղկացած է 9 դիտորդից: Չնայած շատերն ունեն ռազմական և ոստիկանության փորձ, բայց նրանք հիմնականում քաղաքացիական փորձ ունեն: Խումբը զրուցում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, տեղական իշխանությունների և այլ հաստատությունների և անհատների հետ՝ Մարդու անվտանգության հարցերը դիտարկելու, այդ թվում՝ տեղաշարժի ազատության, ստիպողաբար տեղահանվածների իրավունքների և այլ ամենօրյա մտահոգությունների մասին ամբողջ Արևելյան Վրաստանում:

«Ե՞րբ մենք կկարողանանք վերադառնալ մեր տները»: Սա թերևս ամենադժվար հարցն է, որը ստանում են մեր Մարդու անվտանգության դիտորդները պարեկային ծառայության ընթացքում: Մցխեթայի շրջանի գրասենյակի Մարդու անվտանգության խումբը պարբերաբար այցելում է ամենամեծ բնակավայրերը, որտեղ բնակվում են մարդիկ, որոնք չեն կարող վերադառնալ իրենց տները Վրաստանում հակամարտության պատճառով՝ Ծերովանի, Ծիլկանի և Պրեզեթի: Խումբը գնում է նաև այսպես կոչված «կոլեկտիվ կենտրոններ»՝ շենքեր, որոնք իբրև բնակավայրեր չեն կառուցվել, բայց վերածվել են տեղահանվածներիհամար ապրելատեղի: Նշված շենքերը տեղակայված են Թբիլիսիում և ամբողջ Վրաստանում: Ստիպողաբար տեղահանված անձանց հետ զրույցի հետևանքով ավելի լավ ենք հասկանում այն մարտահրավերների մասին, որոնք կանգնած են նրանց առջև:

Ժամանակ առ ժամանակ դիտորդները տուն են հրավիրվում այն մարդկանց կողմից, ում հետ նրանք խոսում են պարեկություն կատարելիս: Վրացական հյուրընկալությունը մեծահոգի է և անկեղծ: Մարդու անվտանգության խմբի անդամները մասնակցում են Ծննդյան տոների, հարսանիքների և թաղման արարողություններին և լսել են շատ տխուր լուրեր վարչական սահմանի մյուս կողմում մահացած հարազատների մասին, և որոնց թաղման արարողությանը նրանց հարազատները չէին կարող մասնակցել: Այս այցերը նաև հնարավորություն են տալիս բնակիչներին հարցեր տալ մեր և Վրաստանում առաքելության աշխատանքների վերաբերյալ:

Առաքելության ղեկավարի դիմումը

«Առաքելությունը միջոցներ է հատկացնում մարդու անվտանգության հարցերը դիտարկելու համար՝ ֆիզիկական վնաս հասցնելու սպառնալիքից պաշտպանվածության սահմաններից դուրս, ներառյալ, օրինակ, աղքատության, տեղաշարժման ազատության բացակայության և առողջապահական ծառայությունների մուտքի համար: Կարևորն այն է, որ Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելությունը շարունակում է մանրամասն և անաչառ տեղեկատվություն տրամադրել նման իրադարձությունների վերաբերյալ՝ շնորհիվ տարածաշրջանում իր խմբերի աշխատանքի և Թբիլիսիի գլխավոր գրասենյակի փորձագետների: Սա հնարավորություն է տալիս Եվրամիության և Եվրամիության մայրաքաղաքներում որոշումներ կայացնողներին տեղյակ լինել առկա մարտահրավերների մասին: Որոշ դեպքերում նաև ունենք աջակցողի դեր և հաղորդակցումն ու համագործակցումը խթանողի դեր, ինչը հիմնախնդիրների լուծման աղբյուր է տեղական բնակչության համար, որոնց իրավունքներն ու գոյությունը ճնշման տակ է: Նման խնդիրները մենք կբարձրացնենք Եվրամիության դիտորդական առաքելության կողմից գործառնական «Թեժ գծի», միջադեպերի կանխարգելման և դրանց արձագանքման մեխանիզմի հանդիպումների և այլ համապատասխան ձևաչափերի միջոցով» - Էրիկ Հոգ, Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելության ղեկավար:

European Union Monitoring Mission in Georgia

www.eumm.eu

Վրաստանում Եվրամիության դիտորդական առաքելությունը միակ առաքելությունն է, որը կենտրոնացած է բացառապես դիտորդական գործունեության վրա: 2018 թվականի դեկտեմբերի 3-ին Եվրախորհուրդը երկարաձգեց իր մանդատը մինչև 2020 թվականի դեկտեմբերի 14-ը:
Պարոն Էրիկ Հոգը (Դանիա) առաքելության ղեկավարն է: Նրան նախորդում էին Կիաստուտի Յանկաուսկասը (Լիտվա), Տոիվո Կլաարը (Էստոնիա), Անջեյ Տիշկևիչը (Լեհաստան) և Հանսյորգ Հաբերը (Գերմանիա):
Հրատարակված է Վրաստանում ԵՄ դիտորդական առաքելության կողմից:
Հետադարձ կապ՝ press@eumm.ge
· Դեզ Դոյլ, խոսնակ
· Ուիլյամ Բոյդ, մամուլի և հասարակայնության հետ կապերի սպա
· Նինո Սուխիտաշվիլի, մամուլի և հասարակայնության հետ կապերի սպա / Մեդիա մոնիտոր
· Թամթա Մեգրելիձե, մամուլի և հասարակայնության հետ կապերի սպա /Մեդիա մոնիտոր
Այցելեք մեզ՝ www.eumm.eu, ինչպես նաև՝ www.facebook.com/eumm.geo, https://www.instagram.com/eumm_georgia/ և www.flickr.com/photos/eeas-csdp/albums/72157677976230403